

7395

632.3

2-23

Photobeta
1925

2011


2002

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՄԲԱԿԻ ԿՈՄԻՏԵ

Բաժնականության
Գրադարան

632.3

2-23



ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՈՋԻԼԻ ԴԵՄ.

132

Պրոֆ. ԶԱՅՅԵՎ

Հանրամատչելի փոխադրություն ԿԼԵՑՆԻ:

630
33-24

632.3

2-23

պ.

31399 42

**ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՎՈՋԻԼԻ ԴԵՄ.**

Պրոֆ. ԶԱՅՅԵՎ

Հանրամատչելի փոխադրություն ԿԼԵՅՆԻ:

Ռուսերենից թարգմանեց Ա. ՇԵՐԵՆԵՐԸ:



14645-58

Ց Փ Խ Ի Ս

Հրատարակություն Անդրկովկասիան Բամբակագործ Կոմիտեյի

1925

(1003
10633)

089
109-88

ԻՆՊԵՍ ԿՈՎԵԼ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՈՋԻԼԻ ԴԵՄ:

«Բամբակենու վոջիլը» կամ «շիրա»-ն հայտնի է Անդրկով-
կասի համարյա բոլոր բամբակաբուծներին: Նա հավասարապես
փաստում է բամբակի ցանքներին, թե Մուղանում, թե Ղարաջա-
ղում և թե Յերևանի շրջանում:

Բամբակենու վոջիլը մեզանում արդեն վաղուց է, վոր
փաստում է ցանքներին, բայց դժբախտաբար մինչև այժմս բամ-
բակաբուծների մեծ մասը չգիտե, թե վորքան մեծ փաս է նա
հասցնում և, ինչպես յերևում է, միայն նոր և սկսում հասկանալ,
վոր այդ վոջիլն էլ չոռի և բամբակենու կնգուղի վորդի պես, տե-
ղական բամբակաբուծի ամենագլխավոր թշնամիներից մեկն է:

Ուրեմն ամեն մի բամբակաբուծ պետք է սովորի այդ վո-
ջիլի դեմ կովել այնպես, ինչպես նա կովում է չոռի կամ բամ-
բակենու կնգուղի վորդի դեմ:

Բամբակենու փոքրիկ մոխրա-կանաչավուն վոջիլի վտանգը
կայանում է նրանում, վոր նա տեղավորվելով բամբակենու վրա
յերբ սա դեռ նոր է ծիլեր արձակում, սկսում է ծծել բույսի
ամենաքնքույշ մասերը, այսինքն վերևի մատղաշ տերևները ու
բողբոջները: Դրանից բույսի տերևները սկսում են չորանալ և
թափվել և յեթե բույսը չի փչանում բոլորովին, այնուամենայնիվ
նա այլևս չի կարողանում ինչպես հարկն է զարգանալ:

Վոջիլից փասված այդպիսի բույսերը հետ են մնում իրենց
զարգացումից, լինում են նվազ, բողբոջներ չեն տալիս և կոկո-
ններ չեն արձակում: Այդպես, վոջիլով խիստ վարակված թփերը
բամբակ համարյա թե չեն տալիս: Դրան պետք է ավելացնել,
վոր վոջիլից թուլացած թփերը, ինչպես թույլ, սակավարյուն
մարդիկ, շատ հեշտ են յենթարկվում զանազան հիվանդութուն-
ների:

Շատ հաճախ վոջիլից փասված և թուլացած բամբակենու
վրա հարձակվում է այն փոքրիկ տիգը, վորը առաջացնում է

չոռ կոչված հիվանդութիւնը և այն ժամանակ արդեն այգալիսի թփերը բոլորովին վոչնչանում են:

«Ինչ բան և չոռը և ինչպէս նրա դեմ կռիւն» գրքուկում մանրամասնորեն բացատրված և, վոր բամբակի ցանքները հաճախ վոչնչացնող չոռը տարածվում և գլխավորապես թուլլ և տկար ցանքների վրա:

Ուրեմն բամբակեցու վաշիլը ծծելով մասդաւ ծիւերի կլուրերը, բուլացնում է նրանց եւ այգալիսով նպաստում է չոռի տարածման, վաւից վերջնականապես վոչնչացնում է բուլսը:

Հետևաբար, բամբակի ցանքների վրա առաջացած վոշիլը, թեյն ինքը անմիջապէս չի վոչնչացնում բուլսը, այնուամենայնիւ բամբակաբույժը չպետք է մոռանա, վոր այդ վոշիլը չափազանց ֆլասակար և կողմնակի կերպով—հենց նրանով, վոր նա թուլացնում է ֆլասված բամբակենու թփերը և այգալիսով նպաստում է չոռի տարածվելուն բամբակի ցանքներում:

Վոշիլի հասցրած այդ կրկնակի ֆլասի մասին բամբակաբույժը միշտ պետք է հիշի և յերեք անտարբեր չպետք է լինի, յեթե նրա ցանքներում նույնիսկ փոքր քանակութեամբ վոշիլ է առաջանում:

Վոշիլի շնորհիւ թուլացած բամբակենու վրա հաճախ մի ուրիշ հիվանդութիւն էլ է յերևան գալիս—դա այգալիս կոչված մուրն է (սևուլթ—чернь), վորի պատճառով բամբակենու տերևները և նոր բացվող կնգուղները կարծես մրոտվում են: Այդ հիվանդութիւնը առաջացնում է մի փոքրիկ բուլս, վորը հասարակ աչքով չի յերևում (նրան կարելի է տեսնել ուժեղ խոշորացուցով) և վորը կոչվում է «մրոտ—սուկիկ» (сажистый грибок):

Հասկանալի է, վոր այդ տեսակ թփերից հավաքված բամբակը բոլորովին անպետք է, վորովհետև յեթե նրան մյուս բամբակի հետ խառնեն, այդ դեպքում նա կփչացնի բամբակի ամբողջ բերքը:

Ուրեմն ի ֆլաս բամբակաբույժին այդ տեսակ սևացած բամբակը պետք է բոլորովին դեն պցել:

Այգալիս ուրեմն, դուրս է գալիս, վոր բամբակենու վոշիլը բացի այն, վոր ինչպէս մակաբույժ, ծծում է մատղաշ բուլսերից նրանց համար անհրաժեշտ սննդանյութերը նա այնքան, և թուլացնում թուփը, վոր սա հեշտութեամբ է վարակվում զանազան հիվանդութիւններով, ինչպէս են չոռը, սևուլթը և այլն:

Այժմ արդեն բոլորովին պարզ է, վոր վոշիլի դեմ բամբակաբույժը նույնպէս պետք է յեռանդուն կերպով մաքառի, ինչպէս և իր մյուս յերկու թշնամիների—չոռի և կնգուղի վարդի դեմ: Ինչպէս կռիւն բամբակենու վոշիլի դեմ?

Դրա համար հարկավոր է լավ ծանոթանալ վոշիլի կյանքի և սովորութիւնների հետ:

Դարնան և ամառվա սկզբին բամբակենու մատղաշ ծիւերի հետ միասին, նրանց վրա սկսում են յերևալ բամբակաբույժներին լավ ծանոթ մոխրա-կանաչավուն վոշիլները: Սրանք սկսում են ուղղակի կենդանի թրթուրներ ծնել և արագ կերպով զարգանալ: Այդ թրթուրները իրենց մայրերի կողքին նստած, սնվում են հենց նույն բուլսերով, մեծանում են և մի շաբաթվա ընթացքում դառնում հասուն վոշիլ: Այգալիսով, մի տարվա ընթացքում վոշիլը ապրիս է մինչև 20 սերունդ: Սրանից յերևում է, թե ինչու վոշիլը այսպէս արագ է բազմանում:


Յեթե բամբակաբույժին չի հաջողվի իր ցանքում հենց սկզբից վոշիլը յերևան հանել, այդ դեպքում նա վոշիլի տարածման մասին կիմանա ցանքերի արտաքին տեսքից:

Այս գրքուկի սկզբում արդեն տված է, վոր վոշիլը սկսում է նստել բոլորովին ջահել ծիւերի վրա: Այդ ժամանակ հաճախ է պատահում, վոր վոշիլը ֆլասում է տերևածոցի բողբոջին (пазушная почка) և այդ դեպքում պատահում է հետևյալ հետաքրքիր յերրևույթը. այգալիսի ֆլասված բողբոջից արդեն իսկական տերև չի առաջանում, կամ յեթե առաջանում է ապա չափազանց այլանդակված, իսկ շաքիլավոր տերևները, վորոնք առողջ բուլսերի վրա առհասարակ լինում են փոքր, այստեղ ընդհակառակը, մեծանում են, դառնում սովորական տերևներից տնհամեմատ սովելի մեծ: Դա ցույց է տրված № 1 և 2 նկարում:

Յեթե վոշիլը սկսում է ֆլասել բամբակենու թփերին, սրանք վոլորվում են և ծածկվում պղպճակավոր ուռոցքներով, ինչպէս ցույց է տրված № 3 նկարում:

Իսկ վոշիլից ֆլասված սովելի հին տերևները արդեն չեն վոլորվում, այլ միայն կնճուկում—փոթոթվում են և ծածկվում վոշիլին հատուկ արտաթորութեամբ, վորը տերևների վրա նման է շող տված թութխալի (խեթ) կաթիլներին:

Ահա այդ նշաններից բամբակաբույժը միշտ անսխալ կտ-




Նկ. № 1.

Առողջ բույս սովորական շաքիլավոր տերեւներով:

Նկ. № 2.

Միևնույն բույսը, վորի տերեւները այլ-անդակիկ են վոճիկի ջնորճիկ: Տերեւ-ծոցի բույրոջները զեռ փռալով չեն վոճրկից:



Նկ. № 3.

Վոճիկից փռալով տերեւները, ծծված ան-վան յորիկիկները են և ծածկված պղնձ-վոճիկները վորովում են և ծածկված պղնձ-հակված, ուստի ներքին:


բող և խմանալ իր բամբակի ցանքներում վոջիկի ներկայու-թյունը:

Ամառվա ընթացքում բամբակի ցանքներում, բացի սովո-րական վոջիկից (ցույց և տված խիստ մեծացրած № 4 նկարում) վորը, ինչպես հայտնի և թեև չունի, այլ փոխադրվում և սողա-լով, յերևան են զալիս բեզմալոր վոջիկներ (տես № 5 և № 6



Նկ. № 4.

Սովորական բամբակենու վոճիկը խիստ մեծացրած, իսկ զեպի աջ նա ցույց և տրված իր իսկական չափով:



Նկ. № 5.

Թևավոր վոճիկը յերևում և վերեկից, խիստ մեծացրած, իսկ զեպի աջ նա ցույց և տրված իր իսկական չափով:

նկարներ) նրանք բաց զեղնա—կանաչ են: Այդ թևավոր վոջիկները յերևան են զալիս ամառը, այսինքն այն ժամանակ, յերբ բամ-բակի թփերի վրա նրանք սովորաբար այնքան են բողմացած լինում, վոր չեն կարողանում բախկանանալ թփի հյութերով:



Նկ. № 6.

Թևալոր վոջիլը կողքից. նույնպես խիստ մեծացրած:

Այդ ժամանակ թևավոր վոջիլը կարողանում է թռչելով տարածվել ամբողջ ցանքսի վրա անցնելով թփից թուփ մինչև մի քանի տասնյակ սափեն: Իսկ յեթե նրա թռիչքների ժամանակ քամի էլ է լինում, ուրեմն հասկանալի է, վոր վոջիլը հնարավորութուն է ստանում հիվանդ թփերից փոխադրվել առողջ թփերի վրա և այդպիսով վարակել մեծ տարածութուններ:

Ահա թե ինչու բամբակաբուծի համար վոջիլը վստահավոր է նույնիսկ այն դեպքում, չեթե նա վարակել է միայն մի բանի բուփ: Ամեն մի այդպիսի թուփ իրենից ներկայացնում է թռչող վոջիլների բույն, վորից ամառվա կեսին դուրս են թռչում վոջիլները զանազան կողմեր և վարակում ցանքսերը: Սրանից յերևում է, թե վարքան կարեվոր է բամբակենու վոջիլի վոչնչացումը նախ բան նրա քեզավոր սեռնդի առաջ գալը:

Վոջիլի վոչնչացնելու ամենալավ միջոցն է—հիվանդ թփերը ծխախոտի յեփվածքով սրակելը: Սրկսում են հատուկ սրակիչ մեքենաներով—Վերմորելի կամ Պլյացի:

Բամբակաբուծյծների մեծ մասը այս սրակիչ մեքենաների հետ ծանոթ է, նրանք յերկուսն էլ լավ են և արժեն 20—25 ռուբլուց վոչ ավել:

Ծխախոտի (թութունի) յեփվածքը պատրաստում են հետևյալ կերպով. հասարակ մախորկան կամ թե ծխախոտի զանազան կտորատանք թրջում են 5—6 օր ջրի մեջ հաշվելով 1 վեդրո ջրի համար 1 ֆ. թութուն: Թութունը ջրի մեջ, պետք է խառնել, վորպիսով նա չլողա յերեսին, այլ նստի տակը: Դրանից հետո, այդ ջուրը քամում են և լավ յետացնում 4 ժամ: Նախ քան նրա

գործածելը յեփվածքի վրա ավելացնում են 2 կամ 3 վեդրո մաքուր ջուր:

Նկատված է, վոր վոջիլը ավելի հեշտ է վոչնչանում, յեթե ծխախոտի յեփվածքի վրա ջուր ավելացնելուց հետո, ավելացնել էլի ամեն մի վեդրոյին կես ֆունտի չափ սապոն: Ավելի լավ է կանաչ սապոն, վորովհետև նա ջրի մեջ հեշտ է լուծվում: Բայց յեթե կանաչ սապոն չի ճարվում, կարելի է վեդրոյի սովորական հասարակ սապոն, բայց նախորոք նրան հարկավոր է մանրացնել և վրան տաք ջուր լեցնել, վորովհետև սառը ջրի մեջ նա չի լուծվի:

Այդպես պատրաստված սապոն ջուրը լեցնում են ծխախոտի յեփվածքի վրա հասարակ սառը ջրի փոխարեն, այսինքն ամեն մի վեդրո ծխախոտի յեփվածքի վրա ավելացնում են 2—3 վեդրո վոչ թե հասարակ ջուր, այլ սապոն ջուր:

Այդ հեղուկով հարկավոր է սրակել բոլոր հիվանդ թփերը, զլխավորապես տերևների ցածրի կողմից, վորովհետև վոջիլը ինչպես և չորը, սիրում է տեղավորվել տերևների ներքևի մասում: Վորպեսզի տերևների ցածրի մասերը լավ սրակվեն, գործ են ածում սրակիչ մեքենաների համար հատուկ կես ծայրեր: Յեթե անտեսության մեջ սրակիչի այդ տեսակ կեռ պատրաստի ծայր չկա, կարելի է մի կերպ տանը պատրաստել և հարմարեցնել սրակիչի ծայրին:

Մե վեդրո պատրաստի յեփվածքով (այսինքն արդեն ջուրը ավելացրած) կարելի է սրակել մինչև 100 թուփ: Վորպեսզի թփի վրա նստած վոջիլները վերջնականապես վոչնչանան, ավելի լավ է թփերի սրակումը կրկնել մի տասը օրից հետո, բայց ինքսինքյան հասկանալի է, վոր բամբակի վոջիլի դեմ կովելու ամենագլխավոր միջոցն է—բույլ չսալ նրա բազմացումը բամբակի ցանքսերում:

Բայց ինչպես դա անել?

Ահա թե ինչ է հարկավոր իմանալ դրա համար:

Յերևի բամբակաբուծերից շատերը նկատել են, վոր չնայած վոջիլի արագ բազմանալուն, այնուամենայնիվ ոգնատուի վերջերում նա սկսում է չքանալ և նրան արդեն կարելի է գտնել միայն մի քանի թփերի վրա—տեղ-տեղ:

Բանից դուրս և դալիս, վոր այդ ժամանակ վոջիլներին սկսում են վոջնչացնել նրանց թշնամիները—զանազան միջատները:

Վոջիլի տմենադլիսավոր թշնամին և կարծրաթև զատիկ կոչված տերավամիջատը (божья коровка) և նրա թրթուրները:



Նկ. № 7.

Կարծրաթև տերևամիջատը, վորը վոջնչացնում և վոջիլներին խիստ մեծացրած: Դեպի աջ, միևնույն միջատը իր իսկական չափով:




Նկ. № 8.

Կարծրաթև տերևամիջատի թրթուր, վորը նույնպես ծծում և վոջիլներին: Նա ցույց և տված խիստ մեծացրած, իսկ դեպի աջ իր իսկական չափով:


Մի ուրվա ընթացքում ամեն մի զատիկը կարող վոջնչացնել մինչև 60 վոջիլ: Պարզ և ուրեմն, վոր բամբակաբույծը պետք և ամեն մի կերպ պահպանել այդ տերևամիջատներին, իր այդ վոջքիկ ոգնականներին ու բարեկամներին: Զատիկները բամբակենուն բնավ չեն փաստում, ընդհակառակը նրանք ոգնում են նրան, ուտում են վոջ թե միայն վոջիլներին, այլ և չոր ու առաջացնող տիգերին:

Բացի կարծրաթև զատիկից, բամբակենու վոջիլը մի ուրիշ թշնամի էլ ունի, վոր նույնպես անողոք կերպով վոջնչացնում և նրան: Դա վոսկյաաչիկ ըզեզն և (Златоглазка), նրա հետ բամբակաբույծերը յերեկ ծանոթ են. դա կանաչա-շագանակագույն ըզեզ և, քնքույշ, թափանցիկ կանաչագույն թևերով և վոսկու նման փայլուն աչքերով: Այդ աչքերի շնորհիվ էլ նա ստացել և այդ անունը: Վոսկյաաչիկը ցույց և տված № 9 նկարում, մոտավորապես 2 անգամ մեծացրած. նրա ձվիկները ցույց են տրված № 10 նկարում, իսկ № 11 նկարը ցույց և տալիս, թե ինչպես վոսկյաաչիկը ծծում և թևավոր վոջիլին:



Նկ. № 9.

«Վոսկյաաչիկ»: Նա վոջնչացնում և վոջիլն ինչպես և կարծրաթև տերևամիջատը: Այդ պատճառով բամբակաբույծերը դեպի նրան պետք և խնամքով վերաբերվեն:



Նկ. № 10.

Վոսկյաաչիկի ձվիկները. մեծացրած: Դեպի աջ նրանք ցույց են տված իրենց իսկական չափով:



Նկ. № 11.

Այստեղ ցույց և տված վոսկյաաչիկ, վորը ծծում և թևավոր վոջիլին: Դեպի աջ միևնույն բանը իսկական մեծությամբ:

Վերջապես վոջիլը ունի ելի մի ուրիշ թշնամի—ըզզան ճանճի թրթուրները (личинки мухи-журчалки): Մրանք նույնպես հարձակվում են վոջիլների վրա և նրանց ծծում: № 12 նկարը հենց ցույց և տալիս թե ինչպես և դա կատարվում, իսկ № 13 նկարում ցույց և տրված ինքը ըզզան ճանճը:

Այնպես իրենց թշնամիներից ազատված վոջիլները անցնում են վայրի խոտերի վրա առանց փառվելու ցրտերից: Գարնան սկզբներում նրանք նորից անցնելով բամբակի թփերի վրա և ամառվա ընթացքում թևավորվելով, նորից անցնում են վայրի խոտերի վրա ձմեռելու:

Ահա թի ինչու վոջիլի դեմ կովիլիս անհրաժեշտ և մաքառել նույնպես վայրի խոտերի դեմ: Վայրի խոտերը, ապաստա-

բան լինելով ձմեռող վոջիկներին, ամառը նպաստում են նրանց տարածվելուն:



Նկ. № 12.

Այս նկարում ցույց է տրված, թե ինչպես բզրան ճանճը հարձակվում է վոջիկների վրա և նրանց ծծում:

Հասկանալի է, վոր վայրի խոտերը՝ հարկապարհ և վոջնչացնել վոջ թե միայն սեփհական արտում և նրա սահմաններում, այլ և պետք է համոզել բոլոր հարեաններին նույնը անել իրենց արտերում: Թե ինչպես է հարկավոր կովել վայրի խոտերի դեմ, մանրամասնորեն բացատրված է «Ինչ փնտս են հասցնում վայրի խոտերը և ինչպես կովել նրանց դեմ».—վերնագրով գրքույկում:

Բացի դրանից, պետք է հիշել, վոր բամբակենու վոջիլը կերակրվում է նաև զանազան բանջարեղեններով: Նա հեշտությամբ և տարածվում վարունգի, դդումի, յեմիշի և ձմերուկի վրա: Այդ պատճառով բոստանները բամբակի համար վատ հարեաններ են—վոջիլը բոստաններից տեղափոխվում է բամբակենու վրա և հակառակը, վորով և դժվարացնում է նրա դեմ կռիվը:

Հասկանալի է նույնպես, թե ինչու համար վոջիլի դեմ մաքանելու համար լավ է ձեռնարկել շարքով ցանքսին: Շարքով ցանքսի դեպքում արտը վայրի խոտերից հեշտ է մաքրել: Բացի դրանից, շարքով ցանքսի դեպքում վոջիլի համար դժվար է վարակված թփերից առողջ թփերի վրա փոխադրվելը և վերջապես, շարքով ցանքսի դեպքում, հիվանդ թփերի սրսկումը անհամեմատ հեշտանում է:



Նկ. № 13.

Բզրան ճանճ մեծուցրած: Դեպի աջ միևնույնը իր խկական չափով:

Շարքով ցանքի մասին բացատրված է «Ինչու շարքով ցանքը ձեռնառու է ցրել ցանքից» գրքույկում:


Այժմս արդեն, իմանալով վոջիլի բոլոր սովորությունները հասկանալի են և այն բոլոր կանոնները, վորոնց բամբակաբույծները պետք է հետևեն, յեթե ուզում են վոջիլի փնտսներից պահպանել իրենց աշխատանքը ու արտի բերքը: Իրա համար անհրաժեշտ է:

1. Ուշադրությամբ մաքրել արտը և նրա սահմանները վայրի խոտերից, իսկ յեթե բամբակի ցանքսերը կպած են աղատ հողերի, ապա անհրաժեշտ է արտի սահմաններից մի 15 սաժեն դեպի այդ աղատ հողերը եղած տարածությունը մաքրել անպետք խոտերից:

2. Հսկել իր արտի կանոնավոր ջրելու վրա, վորովհետև ավելորդ ջուրը թուլացնում է բամբակենուն և ոգնում է վոջիլի տարածվելուն:

3. Բամբակի ցանքսերի մեջ բանջարեղեններ չ'ցանել և կարելվույն չափով ցանքսերի կողքին բոստաններ չ'մշակել: Իսկ յեթե դա անկարելի է—ուրեմն անհրաժեշտ է աշնանը բանջարեղենների մնացորդները արմատախիլ անել, նրանցից բուրգեր կադմել և անպայման այրել, վորովհետև վոջիլը այդ մնացորդների մեջ և անցկացնում ձմեռը:

4. Յեթե այնուամենայնիվ ցանքսերում վոջիլ է առաջացել, ապա նրան անհրաժեշտ է ծխախոտի յեփվածք սրսկելով, վոջնչացնել, ինչպես վոր դրա մասին բացատրված է այս գրքույկում:



Բ Ա Մ Բ Ա Կ Ա Բ Ո Ւ Յ Ծ Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

**Անգղիականացի Բամբակի Կոմիտեին հրահարակել և
հետևյալ գրույկները**

I. Բ Ա Ժ Ի Ն

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՒ ԽՆԱՄՔԸ

- № 1. Բամբակենիի պարարտացները բերքի առատացման նպաստավոր պայմանն է—**Պ. Մեզվեզեվ:**
- № 2. Ինչ և հարկավոր իմանալ բամբակագործին ջրի մասին, վորպեսզի ստանա լավ բերք—**Ինժինե Գ. Մանուչարով:**
- № 3. Ինչու շարքով ցանքը լավ և ցրիվ ցանքից—**Ագրոնոմ Բ. Զեյզլից:**
- № 4. Ինչու և անհրաժեշտ հողի փխրումը բամբակի մշակման համար և ինչու՞ն և կայանում նրա ոգուտը—**Ագրոնոմ Ա. Դուգուշին:**
- № 5. Ինչ ֆևաս են հասցնում վայրի խոտերը և ինչպես նրանց հետ կռվել—**Պրոֆ. Պ. Ժուկովսկի և ագրոնոմ Ե. Կլեյն:**
- № 6. Բամբակաբույծ հիշիր Լենինի լոգունգը՝ «Լավ և քիչ բայց լավ»—**Ագրոնոմ Ն. Տարասինով:**

II. Բ Ա Ժ Ի Ն

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԸ ԵՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- № 1. Կնգուղի վորդը—բամբակաբույծի ամենամեծ թշնամին է—**Ենսումուլոգ ՅԱ. Պրինց, հանրամատչելի փոխադրութուն ագրոնոմ Ե. Կլեյնի:**
- № 2. Ինչ բան և չոտը և կռիվ նրա հետ—**Պրոպ. Է. Զայցեվ:**
- № 3. Ինչպես կռվել բամբակենու վոճիլի հետ—**Ենսումուլոգ Ն. Արխանգելսկի:**

ԱՄԵՆ ՄԻ ԳՐԳՈՒՅԵԸ ԱՐԺԵ 10 ԿՈՊ.

Անդրբամբակիումի գրքույկները կարելի է ստանալ շրջանային ագրոնոմներից և մոտակա գործարաններից կամ զնման կայարաններից:



ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

7395

2073

ՀՀ Ազգային գրադարան



NL0079146

